ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ N 2 (35) 2023

ԸՆԴԵՐՔԻՑ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

- ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ. ԶՊՄԿ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյան
- ՀՈՒՇԱԳԻՐ. Համագործակցություն՝ հանուն կայուն զարգացման
- ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ. ԶՊՄԿ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Արթուր Նիկողոսյան
- ԿԻՆԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԸ
- «ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ԹԵ ԲԵՌ Է, ԱՅԼ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ»
- ԱՐՎԵՍՏ. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ, ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ
- ՍՊՈՐՏ. «ՍՅՈՒՆԻՔ» ԱԿՈՒՄԲԸ ԵՎՐՈՊԱՅԻՑ ԲԵՐԵՑ 10 ՄԵԴԱԼ

ZCMC ZANGEZUR PRESERVING VALUES

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՑ

Հայաստանի հանքագործների եւ մետալուրգների միության նախագահ, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյանն այսօր լրագրողների հետ հանդիպմանն ամփոփել է 2022 թվականը, ներկայացրել ոլորտի արդի մարտահրավերները եւ տեսակարար կշիռը բյուջետային մուտքերի կառուցվածքում:

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Այն մարտահրավերները, որոնք ունենք ոլորտում եւ ընդհանրապես տնտեսության մեջ, մեծամասամբ սկսել են 2022 թվականից: Ամենածանր եւ ամենադժվար գործոնը դրամի ամրապնդումն է: Ոլորտը, ինչպես նաեւ մնացած արտահանող կազմակերպությունները, շատ ծանր դրության մեջ են հայտնվել, քանի որ կազմակերպություններից շատերի ծախսային մասը դրամային է, իսկ հասույթը՝ արտարժույթով: Սա բերել է նրան, որ ինքնարժեքն աճել է, եւ ոլորտի շատ կազմակերպություններ փաստացի վնասով են աշխատում: Այս հարցը մենք մի քանի անգամ ներկայացրել ենք կառավարությանը: Ցավոք, խնդիրն իրականում շատ ավելի խորքային է: Եթե Կենտրոնական բանկը քայլեր ձեռնարկի եւ դրամը թուլացնի, դա էլ կարող է բերել հակառակ իրողության: Այսինքն՝ հասկանում ենք, որ ուղղակիորեն այս խնդիրը շատ դժվար է լուծել: Մենք մի քանի առաջարկ ենք ներկայացրել կառավարությանը, թե դրամի այսպիսի ամուր կուրսը պահպանվելու դեպքում ինչ քայլեր կարելի է ձեռնարկել, որ ոլորտն եւ արտահանող կազմակերպությունները չունենան այդ խնդիրները: Նախորդ տարի ոլորտում եւս երկու խնդիր ունեինք, բայց այս պահի դրությամբ դրանք արդեն չկան: Մեկն աննախադեպ արտահանման տուրքն էր, որը, մեր կարծիքով, տնտեսապես հիմնավորված չէր, մյուսը՝ հիմնական մետաղների գների անկումը: Այժմ արտահանման տուրքը չկա, իսկ մետաղների գներն արդեն վերականգնվել են:

Արտահանման ծավալները

2021թ.-ի համեմատ 2022-ին հանքարդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է եղել երկրորդ խոշոր արտադրողի՝ Թեղուտի հանքի չաշխատելով: Բայց մնացած բոլոր արտադրողներն ունեցել են աճ: ԶՊՄԿ-ն մոտ 20% ավելի արտադրանք է տվել եւ արտահանել: Մնացած բոլոր կազմակերպությունները եւս արտահանման ծավալների խնդիրներ չեն ունեցել:

Ամուլսարը եւ չիրացվող ներուժը

Հայաստանում կա մեկ միջազգային մակարդակի խոշոր հանքագործական կազմակերպություն՝ ԶՊՄԿ-ը, երկրորդ այդպիսի կարևոր կազմակերպությունը պետք է լիներ Ամուլսարի հանքը: Բայց այն, ինչ պատահեց Ամուլսարի հետ, շատ վատ էր: Արեւմտյան միջազգային ներդրողները փորձում էին Հայաստանում սկսել մի մեծ նախագիծ, ինչը չստացվեց, չնայած նրանք ոչ մի օրենք չէին խախտել: Երբ խոսում ենք ԶՊՄԿ-ից, որի վճարած հարկերը շատ մեծ են, մի այդպիսի կորուստ վերջին 4-5 տարում ունենք Ամուլսարի դեպքում: Խոսքը հարյուր միլիոնավոր դոլարների չիրականացված մուտքի մասին է:
Մյուս այդպիսի հանքը Թեղուտն էր, բայց հուսանք, որ կգործի: Այս երկու կազմակերպությունները մեր ոլորտի մոտ 50%-ի չափ արտադրանք կարող էին տալ: Ինչ վերաբերում է «Գեոպրոմայնինգ գոլդ»-ին՝ այս կազմակերպությունը եւս ոչ այնքան լավ վիճակում է: 44-օրյա պատերազմի հետեւանքով հանքի մի մասը մնաց թշնամու տարածքում: Աշխատանք տարվում է, նույնիսկ միջազգային մակարդակով, որ հանքավայրը լիարժեք ծավալներով աշխատի:

Ոլորտի տեսակարար կշիռը

Պետական բյուջեի եկամուտների մասով 2022թ.-ը ՀՀ պատմության մեջ աննախադեպ է՝ մոտ 2 տրիլիոն դրամի չափ եկամուտներ են հավաքագրել, որի մոտ 10%-ն ապահովել է հանքարդյունաբերությունը: Այսինքն՝ մոտ 200 մլրդ դրամի չափով հանքարդյունաբերությունը եկամուտներ է ապահովել պետբյուջե:

Հուշագիր

Համագործակցություն՝ հանուն կայուն զարգացման, երկարաժամկետ և ռազմավարական արդյունքների

Սյունիքի մարզպետարանը և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը կնքել են հուշագիր՝ տնտեսական, սոցիալական և բնապահպանական ոլորտներում համագործակցության մասին:

Ըստ հուշագրի՝ նախատեսվում է համագործակցություն.

· Սոցիալական բնագավառում, մասնավորապես՝ առողջապահության ոլորտում, անապահով ընտանիքների սոցիալական վիճակի բարելավման, կրթության ոլորտում՝ մասնավորապես՝ Սյունիքի մարզը որակյալ մասնագետներով ապահովելու և այլ ուղղություններով:

· Տնտեսական բնագավառում, մասնավորապես՝ նպաստել մարզի տնտեսության դիվերսիֆիկացմանը՝ առաջնահերթությունը տալով թեթև արդյունաբերությունը և հատկապես գյուղատնտեսության ոլորտին:

· Բնապահպանական ոլորտում, մասնավորապես՝ նպաստել մարզի բնապահպանական խնդիրների լուծմանը, խթանել այլընտրանքային էներգիայի կիրառությունը:

Կողմերը պարտավորվել են համագործակցել նաև երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող համապատասխան ոլորտներում մշտադիտարկման, փորձի փոխանակման, տեղեկատվական նյութերի հրապարակման ուղղություններով:

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյան.

«Այս հուշագիրը նպատակ ունի ավելի հաս-

ցեական, համակարգված և արդյունավետ դարձնելու Սյունիքի ամենախոշոր ձեռնարկության մասնակցությունը մարզի զարգացմանը: Ինձ համար հատկապես կարևոր է, որ հուշագիրը նախանշում է կոնկրետ թիրախներ և ըստ ոլորտների ձևակերպում խնդիրների լուծման հստակ ճանապարհները: Կարևոր է նաև, որ տարածքային կառավարման մարմիններն ու մասնավոր ընկերություններն ունենան իրենց պարտավորությունները: Ընկերությունների սոցիալական պատասխանատվության ծրագրերը չպետք է փոխարինեն պետության պարտականություններին, ինչպես հաճախ եղել է, այլ պետք է փոխլրացնեն և ավելի արդյունավետ դարձնեն մարզի զարգացմանն ուղղված ջանքերը»:

ՀՊՄԿ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլի.
«Շատ կարևոր է, որ սոցիալական օգնությունը լինի նպատակային և միտված՝ կայուն զարգացմանը, իսկ դրա համար նպատակների համատեղ համակարգումն անհրաժեշտություն է: Այս հուշագիրը հնարավորություն է ընձեռում նախանշել ռազմավարական ուղղությունները և համակարգել ջանքերը՝ թիրախային ծրագրեր իրականացնելու ուղղությամբ: Ինձ համար հատկապես կարևոր է սոցիալական և բնապահպանական կայունության կարևորության գիտակցումը և այդ ուղղությամբ համատեղ աշխատանքը: Խնդիրները շատ են, բայց մեր լուծումները պետք է կենտրոնանան ոչ թե արագ, այլ՝ կայուն, երկարաժամկետ ու ռազմավարական արդյունքների վրա»:

«Այս հուշագիրը հնարավորություն է ընձեռում նախանշել ռազմավարական ուղղությունները և համակարգել ջանքերը՝ թիրախային ծրագրեր իրականացնելու ուղղությամբ:

Իր գործունեության յոթ տասնամյակը բոլորած Զանգեզուրի կոմբինատը շարունակում է աշխատանքային երթը դժվարություններով լեցուն մեր օրերում՝ ծանրակշիռ ներդրում ունենալով երկրի պետական գանձարանում և Սյունիքում սոցիալ-տնտեսական ներդաշնակություն ապահովելու գործում: Հանքարդյունաբերական հսկայի հավասարակշռված և արդյունավետ գործունեությունը պայմանավորված է նաև ընկերության նոր բաժնետերերի, ղեկավար թիմի ողջամիտ աշխատանքով:

ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԵԼ Է ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԺԵՔՆ ԻՄԱՅՈՂՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՍԵՐՈՒՆԴ

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՄԿ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԹՈՒՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ ՇՈՒՐՋ 30 ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁ ՈՒՆԻ ԼԵՌՆԱՄԵՏԱԼՈՒՐԳԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ

– Լրացավ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հիմնադրման 70-ամյակը: Դա իրադարձություն է ոչ միայն հանքագործների սյունիքյան ընտանիքում, այլև ամբողջ հանրապետության տնտեսական ու գործարար կյանքում:

– Զանգեզուրի պղնձամոլիբդենային իսկապես Հայաստանի տնտեսության գոհարն է: Այս ձեռնարկությունը կրթել է աշխատանքի, գիտության, արդյունաբերության իրական արժեքն իմացող պրոֆեսիոնալների մի քանի սերունդ: 70 տարին պատկառելի տարիք է նույնիսկ հանքարդյունաբերական հսկայի համար: Կոմբինատն այդ տարիքին է հասել բազմաթիվ ձեռքբերումներով, հպարտ անցյալով, և վստահ եմ՝ էլ ավելի մեծ ձեռքբերումներով լի ապագայով, ու դրանում ոչ միայն մեր կոլեկտիվի, այլև Քաջարան և Կապան համայնքների մեծ ավանդը կա: Մաղթում եմ, որ հաջորդ տարիներին մենք բոլորս հպարտորեն կարողանանք ասել՝ ԶՊՄԿ-ն նաև աշխարհի ամենամոդեռն, ամենաառաջատար տեխնոլոգիաների կիրառմամբ, օրինակելի արդյունաբերողների շարքում է:

– Քչերը գիտեն, որ Ձեր նախնիները, դեռևս 20-րդ դարասկզբին, անմիջական մասնակցություն են ունեցել մեր երկրամասի ու հատկապես Կապանի տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Այդ մասին կուզենայինք մի փոքր ավելի հանգամանալից իմանալ:

– Սյունիքը մայրական կողմիս հայրենիքն է, և մեր ընտանեկան պատմությունները 19-րդ դարավերջի, 20-րդ դարասկզբի Սյունիքի պատմության հետ սերտորեն կապված են: Մայրս Խոջամիրյանների (Խոջամիրովների) գերդաստանից է: Մորս պապը Սմբատ Խոջամիրովն է, ով 19-րդ դարի երկրորդ կեսին Սյունիքի հանքարդյունաբերության պատմության կերտողներից էր: Մասնավորապես՝ Կավարտի հանքի հայտնագործողը և դրանից սկիզբ առած մի քանի այլ հանքարդյունաբերական ծրագրերի սեփականատերը: Ընտանեկան պատմությունը, ինչպես այդ շրջանի բոլոր ձեռնարկատերերինը, հետագայում տրագիկ շրջադարձ է ունեցել՝ կուլակաթափություն, աքսոր, և այլն: Բայց մորս ընտանիքում հպարտությամբ էին հիշում, որ մեր նախնիները Հայաստանի ինդուստրիացման ակունքներում են կանգնած եղել:

Ես հանքարդյունաբերության ոլորտում պատահական մարդ չեմ, հայրս այս ոլորտում մեծ ավանդ ունի, կրթությունս նույնպես այս ոլորտում եմ ստացել: Բայց այն, որ ճակատագիրն ինձ 2011 թվականից բերեց Սյունիք՝ սկզբում Ագարակի կոմբինատ, հիմա նաև՝ ԶՊՄԿ, ինձ համար խորհրդանշական է և պարտավորեց-

նող:

– Ընկերությունը միշտ էլ սոցիալական որոշակի պատասխանատվություն է կրել մարզի և մասնավորապես ազդակիր Քաջարան, Կապան համայնքներում: Հետաքրքիր է՝ որքա՞ն ներդրումներ է կատարել ընկերությունը նշված համայնքներում իրականացվող սուբվենցիոն (և ոչ միայն) ծրագրերում՝ ասենք՝ 2022-ի կտրվածքով:

– Եթե խոսենք թվերով, ապա անցյալ տարվա կտրվածքով համայնքներում իրականացվել է ավելի քան 3 միլիարդ դրամի ծրագիր, ներառյալ՝ մարզային սուբվենցիոն ծրագրերում ԶՊՄԿ մասնակցությունը: Չկա ոլորտ, որտեղ ներդրում արած չլինենք: Անցյալ տարի հիմնանորոգվեց Կապանի մարզադաշտը, իրականացվեցին բնակելի շենքերի նորոգման, մարզային ենթակառուցվածքների բարեկարգման մի շարք ծրագրեր: Ինձ համար առանձնապես գնահատելի են կրթական ոլորտում մեր ներդրումները, երիտասարդ տաղանդների աջակցությունից մինչև մարզական և մշակութային ծրագրերը, մեր նպատակը երկարաժամկետ արժեքների ստեղծումն է: Ընդհանրապես, ես կուզեի, որ սոցիալական ներդրումների արդյունավետությունը չափվեր ոչ թե գումարով, այլ ստեղծած սոցիալական, տնտեսական արժեքով: Սոցիալական ծրագրերը չպետք է ինքնանպատակ լինեն: Կարելի է պարզապես փող բաժանել բնակիչներին, բայց դա ոչ միայն սոցիալական արժեք չի ստեղծում, այլև վնաս է թե՛ համայնքի, թե՛ երկրի համար, քանի որ արժեզրկում է աշխատանքը: Մենք պետք է բարեգործական ծրագրերից անցում կատարենք դեպի երկարաժամկետ արժեք, տնտեսական հնարավորություններ ստեղծող ծրագրերի: Հայտնի այլաբանության օրինակով՝ ձուկ բաժանելու փոխարեն ձուկ բռնել սովորեցնենք:

– Հանրությանն ամենաշատը հետաքրքրող հարցերից մեկը հետևյալն է՝ ի՞նչ սկզբունքով կամ կարգով է կատարվում նոր աշխատողների ընդունելությունը: Տեղյակ ենք՝ հենց սկզբից նախապատվություն եք տվել ՀՀ զինված ուժերից զորացրվածներին, Արցախյան 3-րդ պատերազմի մասնակիցներին, ինչը, միանշանակ գնահատելի է:

– Անցած տարվա ընթացքում մոտ 500 նոր աշխատակից է միացել կոմբինատին, որոնցից 45-ը՝ նոր զորացրված երիտասարդներ: ԶՊՄԿ-ն միշտ եղել է տեղի երիտասարդների համար ամենացանկալի գործատուն, երկարամյա լավ մասնագիտական կարիերա կերտելու լավագույն հնարավորությունը, և դա այդպես է լինելու միշտ: Սակայն չէի ցանկանա , որ աշխատանքի տեղավորումը դառնար բացառապես սոցիալական խնդիր լուծելու գործիք: Թե՛ մարզի, թե՛ համայնքի, թե՛ կոմբինատի համար կարևոր է, որ այդ գործընթացը լինի թափանցիկ և հիմնված

լինի մասնագիտական արժանիքների գնահատման վրա: Ես ուզում եմ, որ հարցի պատասխանը, թե ինչո՞ւ է այսինչը կամ այնինչն աշխատում կոմբինատում, լինի այդ մարդու մասնագիտական արժանիքները կամ կրթական հաջողությունները:

Այս պահին աշխատում ենք համապարփակ մարդկային ռեսուրսների քաղաքականություն մշակելու ուղղությամբ, որի հիմնական նպատակը պետք է լինի հենց այն, ինչ արդեն նշեցի:

– Եվ վերջին թեման՝ ընկերության կողմից անցկացվող մրցույթները. և՛ նյութատեխնիկական մատակարարման, և՛ բեռնափոխադրումների, և՛ ամենատարբեր ծառայությունների մատուցման առումով. թափանցիկություն, օբյեկտիվություն, տեղական հնարավորությունների օգտագործում...

– Թափանցիկությունը, գնումների, մատակարարումների մրցույթների օբյեկտիվությունը նախ և առաջ անհրաժեշտ են հենց ընկերությանը, հենց աշխատանքի արդյունավետության, լավագույն առաջարկը լավագույն գնով ապահովելու համար: Դա նախ և առաջ կոմբինատի բաժնետերերի, հետևաբար նաև՝ պետության շահից է բխում, քանի որ որքան արդյունավետ աշխատի ընկերությունը, այնքան մեծ կլինի տնտեսական արդյունքը, այդ թվում՝ հարկային մուտքերի տեսքով: Այդ առումով մենք մտադիր ենք հիմնավոր լուծում տալ խնդրին և այժմ աշխատում ենք գնումների ու մատակարարումների մրցույթների ավտոմատացված, թվայնացված առցանց համակարգի ստեղծման վրա: Հույս ունեմ, որ մինչև այս տարվա կեսը կգործարկենք համակարգը, որի արդյունքում հետայսու բոլոր մրցույթները թափանցիկ և հասանելի կլինեն բոլորի համար, իսկ ընտրության չափանիշը կլինի մեկը՝ լավագույն գին-որակ համադրությունը:

> «Որքան արդյունավետ աշխատի ընկերությունը, այնքան մեծ կլինի տնտեսական արդյունքը, այդ թվում՝ հարկային մուտքերի տեսքով:

Հարցազրույցը՝
Սամվել ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ
«Սյունյաց երկիր»

Կինը և հայրենիքը

Իմ առաքելությունն ավարտված չէ, և եթե կարիքս կրկին զգացվի՝ պատրաստ եմ ու կարող եմ...

Մելանյա Գևորգյանը ծնվել է 1966 թվականին Կապան քաղաքում: Ավարտել է տեղի թիվ 27 միջերօթիկ դպրոցը, որից հետո կրթությունը շարունակել է քաղաքի բժշկական ուսումնարանում, ստացել բուժքրոջ մասնագիտություն: Մինչև 1993 թ. աշխատել է Կապանի տարածաշրջանի Կարմրաքար հանգույցյան տանը, որպես բուժկետի պետ: 1993-ից անցել է զինվորական ծառայության՝ ՀՀ զինված ուժերում: Հայրենիքին մատուցած ծառայությունների համար արժանացել է մի շարք՝ «Մայրության, երախտագիտության», «Անբասիր ծառայության», «Վազգեն Սարգսյան», «Գարեգին Նժդեհ», «Անդրանիկ Օզանյան», ՀՀ պետական՝ «Մխիթար Հերացի» և «Մարտական ծառայության» մեդալների ու պատվոգրերի:

Ի վերուստ ճակատամարտերն ու պատերազմները տղամարդկանց համար էին, նրանք ռազմի դաշտում էին, կանայք տանը՝ կենցաղային հոգսերով, սպասելով... Ժամանակներ են փոխվել, և վաղուց արդեն կանայք տղամարդկանց հետ միասին ռազմաճակատներում են, առաջնագծերում: Բուժքույր ու կապավոր, հրետանավոր ու դիպուկահար, անգամ՝ հետախույզ, մեկ բառով՝ հայրենիքի պաշտպան:

– Հայրենիքը մեկն է, անփոխարինելի ու եզակի,– ԶՊՄԿ հատուկ ծրագրի բաժնի աշխատակից, բուժքույր, կապիտան Մելանյա Գևորգյանին մասնագիտական հմտությունները շուրջ 3 տասնամյակ առաջ մղել են հայրենիքի պաշտպանների խնամքի հայրենանվեր գործին:

1993 թվականի հունվարն էր. արցախյան գոյամարտում վիրավորում ստացած ամուսնուն խնամեց և ... մնաց զորամասում: «Բուժքրոջ կարիք շատ կար»,– որոշում կայացրեցի, որն էլ՝ ամբողջ կյանքիս համար էր: Երբեմն, երբ մտքերս հեռուն են տանում, հիշում եմ՝ քանի վիրավորներ են ձեռքիս տակով անցել: Իրավիճակները մեզ էլ են կոփել, դարձրել էլ ավելի պինդ ու տոկուն:

– Դժվար ու սուղ տարիներ էին, բուժքույրերի կարիքն անչափ շատ էր, իսկ պայմանների մասին խոսելը կարծում եմ՝ ավելորդ է. փայտ հայթայթել, կրակ վառել, եռացնել գործիքները, բերել վարակազերծ վիճակի, որ ի վերջո կարողանաս առաջին օգնություն կազմակերպել: Ռազմաճակատում բուժքրոջ հուսադրող մի բառն ու ժպիտը՝ զինվորին կյանքի է կոչում:

«Կոչումով գթության քույրը» – այդ վերնագրերով նրա մասին պատմող հոդվածների ենք հանդիպում «Ազգային Բանակ», «Սյունյաց երկիր», «Հայաստանի Հանրապետություն» պարբերականներում:

1989 թվականից, արցախյան շարժման սկզբից ևեթ, հենց Կարմրաքարում բժշկել է առաջին վիրավորին:

- Սկզբում ինձ կորցրեցի, բայց սթափվեցի և կարողացա օգնել տղաներին: Այսպես սկսվեց... և շարունակվեց իմ

գործունեությունը զինված ուժերում մինչև 2017 թվականը:

Զինվորական ծառայությունն ավարտել է կապիտանի զինվորական կոչումով:

– Կնոջ ներկայությունը ռազմի դաշտում կրկնակի պարտավորեցնում է զինվորներին, մեկ անգամ ևս հիշեցնում՝ նահանջի տեղ չկա:

– Գիտեք, դժվար է անցյալի ծանր ու դաժան օրերը հիշել հատկապես հիմա, երբ կրկին վերապրեցինք պատերազմներ...

– Առաջնագծում եղել եմ անընդհատ, այդ օրերից 30 տարի է անցել, բայց չի ստացվում մոռանալ, որ մի փոքր չափաբաժին ուտելիքով գումարտակ էր գոյատևում՝ հանուն մեկ գործի, մեկ ընդհանուր նպատակի: Պարտավոր էինք չտրտնջալ, ամեն օրը նպատակային օգտագործել ու առաջ գնալ: Եվ չնայած դժվար ու ցուրտ, մութ տարիներին՝ մարդու «հոտ» էր գալիս մարդկանցից. Մեկս մյուսին օգնելով ու մխիթարելով, մեր վաղվա օրը տեսնելով, լարելով մեր վերջին ուժերը... ի վերջո վայելեցինք հաղթանակի բերկրանքը...,- պատմում է զրուցակիցս:

Բնականաբար, հեշտ չէր Մելանյա Գևորգյանի համար. ընտանիք, երեխաներ (երկու երեխաների մայր է, այժմ արդեն՝ 5 թոռների տատ), տան հոգսեր ու կենցաղային պարտականություններ, դժվարություններ, որոնք ևս պետք էր հաղթահարել:

– Պատկերացրեք, ես պատերազմի դաշտում սպիտակ համազգեստ եմ կրել, որքան էլ դժվար էր կազմակերպել հիգիենայի հարցը, ջրի պակաս կար: Հարակից շրջաններից ժողովուրդը սնունդ էր ուղարկում ռազմաճակատ, բրդյա գործած գուլպաներ, անհրաժեշտ այլ պարագաներ: Եվ դա այն ժամանակ, երբ նրանք ևս բավարար սնունդ չունեին:

Բանակի կողքին, բանակի հոգսերով...այդպիսին է մեր ազգը:

Կանայք պատրաստ էին կատարել ցանկացած գործ. առաջնագծում և՛ մայր ես, և՛ բուժքույր, և՛ խոհարար... Հայրենիքի Զինվո՛ր ես առաջնագծում:

2017 թվականին տիկին Մելանյան կամ ինչպես իրեն կոչում են հարազատներն ու մարտական ընկերները՝ «Մելոն», ավարտել է զինվորական ծառայությունը, և հենց մարտական ընկեր, ԶՊՄԿ հատուկ ծրագրերի բաժնի նախկին ղեկավար Ռուբիկ Աբրահամյանի հորդորով՝ աշխատանքի է անցել ընկերությունում որպես բուժքույր:

Երբեք ինձ բանակից հեռու, մեկ այլ ոլորտում չեմ պատկերացրել, և քանի որ այստեղ էլ իմ մասնագիտությամբ առաջարկվեց աշխատանք, համաձայնեցի,– պատմում է:

Որդին ևս, զինվորական է, և մեր հարցին. թե

արդյոք չեն փորձել ապակողմնորոշել իրենց որդուն մասնագիտության ընտրության ժամանակ, նա պատասխանում է՝ մենք գիտակցաբար ենք ստանձնել հայրենիքի պաշտպանության պատասխանատու, կարևոր գործը, որը պատվով կատարելը՝ մեծագույն առաքելություն է: Իսկ ով, եթե՝ ոչ մեր որդիները, պետք է հանձն առնեն այն:
Մեր պատմության մեջ տարբեր ժամանակաշրջաններում հանդիպում ենք նվիրական, հերոս կանանց, ովքեր իրենց գործունեությամբ վճռորոշ դերակատարում են ունեցել երկրի օրհասական պահերին: Նրանք մեր հպարտությունն են, նրանց ճանաչելն ու գնահատելը՝ մեր պարտքն է:
– Առաքելությունս ավարտված չեմ համարում, պատրաստ եմ այսօր էլ առաջնագծում կանգնած զինվորի կողքին լինելու,- հավելում է տիկին Մելանյան:
Ավելացրեց, որ զինվորական համազգեստն իր սիրելի հագուստն է, որի վրա մեկը մյուսի հետևից ուղիղ կարգով դասավորված են նրա վաստակած հերոսական մեդալները: Թող որ այսուհետ պատերազմները մնան անցյալում և խաղաղ երկնքի տակ կանայք կատարեն միայն իրենց կանացի պարտականությունները:

Լիլիթ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ
17.02.2023թ.

Լուսանկարները՝ Նվեր Զելյայի և Մելանյա Գևորգյանի անձնական արխիվից

«Հանքարդյունաբերությունը ոչ թե բեռ է, այլ՝ հնարավորություն». ՏԻՄԵՅԱ ԱՂԱՄՅԱՆ

Հանրապետության թիվ մեկ հարկատու «ԶՊՄԿ» ՓԲԸ-ում 24-ժամյա աշխատանքը եռում է: Սարքավորումները նորացվում են ժամանակին համընթաց՝ ապահովելով կայուն զարգացում: Դրա հետ մեկտեղ հսկա ձեռնարկությունում շարունակում են հավատարիմ մնալ սկզբունքներին՝ թափանցիկ գործելաոճ, անվտանգ միջավայր: Այս ամենը հաշվի առնելով՝ ձեռնարկությունում պարբերաբար ճանաչողական շրջայցեր են կազմակերպվում: Հերթական այցը փետրվարի 17-ին էր: Հյուրերը ՀԱՊՀ «Կապանի» մասնաճյուղի ուսանողներն էին: Որակյալ մասնագետ դառնալու համար բուհում կարևորում են նաև գործնական գիտելիքները:
Կոմբինատ- ՀԱՊՀ համագործակցությունը տարիների պատմություն ունի, բուհում ձեռք բերված տեսական գիտելիքներն աշխատան-

քի անցնելուց հետո արդեն կիրառվում են գործնականում:

Դասախոսների և ուսանողների շրջայցը սկսվեց դիսպետչերական կետից: Բացահանքի բարձման տեղամասի պետ Արման Ստեփանյանը հակիրճ ներկայացրեց, թե ինչպես են էկրանների միջոցով հետևում հսկա տեխնիկայի աշխատանքին և երբեմն առաջացած խնդիրները հարթում մասնագետներով:

Ուսանողներից Արինե Առաքելյանը առաջին անգամ էր լինում կոմբինատում ու շատ տպավորված էր: Արինեն տասը տարի է արդեն՝ Կապանի լեռնահարստացման կոմբինատում բեռնատարի վարորդ է աշխատում, բայց երազում է, որ աշխատանքի ընդունվի ԶՊՄԿ-ում ու վերջապես հսկա «Բելազ» մակնիշի տեխնիկա վարի:

Ուսանողներից ոմանք աշխատում են կոմբինատի տարբեր արտադրամասերում և միաժամանակ սովորում են բուհում ու մտածում մասնագիտական աճի մասին: Նրանցից մեկն էլ «ԶՊՄԿ» ՓԲԸ-ում բացահանքի հորատման տեղամասի էլփականագործ Ալեն Առաքելյանն է: Մտադիր է ավարտելուց հետո մագիստրատուրայում սովորել ու մասնագիտորեն աճել էներգետիկայի ոլորտում:

Քսան տարուց ավելի է Տիմեյա Աղամյանը պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղում հարյուրավոր մասնագետներ է պատրաստել մարզի արդյունաբերական ձեռնարկությունների համար: Շրջայցի ընթացքում ամեն քայլափոխի հանդիպում է իր երբեմնի լավագույն ուսանողներին: Ասում է՝ մեծ մասն այսօր արդեն պատասխանատու պաշտոններ է զբաղեցնում:

Տիմեյա Աղամյան - ՀԱՊՀ «Կապանի» մասնաճյուղի ընդերքաբանության և շինարարության ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ. **«Առանց լեռնային հանքարդյունաբերության չենք կարող պատկերացնել մեր տնտեսությունը: Այսպես ասենք՝ հանքարդյունաբերությունը բեռ չէ, այլ հնարավորություն է ու մենք պարզապես պետք է կարողանանք այդ ընձեռված հնարավորությունը ճիշտ օգտագործել՝ պահպանելով բնապահպանական միջոցառումները: Խելամիտ չէր լինի ունենալ այսպիսի հարուստ ընդերք և չօգտագործել»:**

Հանքարդյունաբերության ոլորտի ապագա մասնագետների կարծիքով՝ շրջայցը հագեցած էր ու բազմաբովանդակ: Շատերը հեռացան՝ նպատակադրված. վերադառնալ ու աշխատել հենց այս հսկա ձեռնարկությունում:

Հերմինե Միքայելյան
22.02.2023թ.

ԵՐԳԱՐՎԵՍՏ

երեխաների հետ, երեխաների համար

Երգահան, պրոդյուսեր, ռեժիսոր Զառա Պետրոսյանը, որի հեղինակած «Խաղ ու Պար» մանկապատանեկան երգերի ժողովածուն վերջերս հրատարակվել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի աջակցությամբ, այցելել էր Սյունիք:

Հեղինակի հետ զրուցել ենք երգարվեստի և նրա հեղինակած գրքի մասին:

– Ուղիղ մեկ տարի առաջ որոշեցի նոտագրել իմ երգերը: Աշխատանքը բարդ էր, և այժմ հպարտությամբ կարող եմ ասել, որ բոլոր դժվարությունները հաղթահարված են, ժողովածուն հասանելի է հանրությանը: Երգերը գրվել են տարբեր ժամանակներում, դրանցից մի քանիսը երեխաներին քաջածանոթ են՝ ինչպես «Sweety baby»-ն, «Խաղ ու Պարը», իհարկե, կան նաև նորություններ: Գիրքը ստեղծված է՝ «Երեխաների հետ, երեխաների համար» սկզբունքով: Բոլոր ստեղծագործությունները մանկական են՝ ռիթմիկ ու ոգևորող, իսկ գրքում տեղ գտած նկարները՝ երեխաների աշխատանքներն են: Գիրքը եզակի ձևաչափ ունի. էջանիշի վրա զետեղված են QR կոդեր, այդպիսով հնարավոր է լսել բոլոր կատարումները, միաժամանակ՝ սովորել երգերի բառերը, նոտաները, հասանելի է նաև գործիքավորումը:

Նոտագրված երգերը ապահովում են ստեղծագործության երկարակեցությունը: Շնորհակալություն եմ հայտնում Զանգեզուրի պղնձամոլիբդենայինին՝ գրքի տպագրությունը ֆինանսավորելու, Սյունիքում աշխատանքային այցս կազմակերպելու համար,- ընդգծեց երգահանը:

> Կարծում եմ՝ երաժշտական կրթություն պետք է ստանան բոլոր երեխաները,- ասում է Զ. Պետրոսյանը,- կդառնամ հետո երաժիշտ, թե՝ ոչ, դա էական չէ: Երաժշտությունը սնում է, հնարավորություններ տալիս, բացահայտում՝ նոր տաղանդներ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը երաշխավորել է աշխատանքը՝ որպես ուսումնական նյութ:

Կապան և Քաջարան համայնքներում հեղինակը հետաքրքիր հանդիպումներ է ունեցել հանրակրթական և արվեստի դպրոցներում, մշակել՝ հետագա համագործակցության քայլեր: Երգարվեստում՝ առավել ևս, ամեն ինչ պետք է համահունչ լինի ժամանակին. որքան երեխային մոտ ու հոգեհարազատ, այնքան՝ հեշտ ընկալելի: Այստեղ է, որ գունեղն ու որակյալը հակազդիչ կլինեն: Մենք պետք է ջանանք, որ մատաղ սերունդը որակյալ երաժշտություն ունկնդրի, և, ի վերջո, մենք պետք է դուրս գանք լացակումած վիճակից՝ հավատով, հույսով, ժպիտով... Երգարվեստն այստեղ էլ անելիքներ շատ ունի:

Լիլիթ Իսրայելյան

«ՍՅՈՒՆԻՔ» ԱԿՈՒՄԲԸ ԵՎՐՈՊԱՅԻՑ ԲԵՐԵՑ 10 ՄԵԴԱԼ

Քիք-բոքսինգի մրցաշարին Եվրոպա մեկնել էին միայն սյունեցի մարզիկները

Փետրվարի 8-13-ը Եվրոպայում՝ 32 երկրներից 2700 մարզիկների մրցաշարում, Հայաստանը ներկայացրեց քիք-բոքսինգի Կապանի 13-հոգանոց թիմը, որին հաջողվեց պատվով հանդես գալ և մեդալներով վերադառնալ:

«Սյունիք» (մարզիչներ՝ Արայիկ Սարգսյան, Վիկտոր Խաչատրյան) ակումբի սաները վերադարձան տպավորիչ հաղթանակներով՝ 2 ոսկի, 1 արծաթ, 7 բրոնզ:

«Սյունիք» ակումբի համար Խորվաթիայում կայացած քիք-բոքսինգի Եվրոպայի գավաթի առաջնության մասնակցությունը ապահովել էր Զանգեզուրի պոլնձամոլիբդենային կոմբինատը: Ընկերությունը շարունակում է ուշադրության կենտրոնում պահել մարզի սպորտային կյանքը՝ խրախուսելով հաջողությունները:

Շնորհավորում ենք մարզիկներին, ցանկանում՝ նորանոր հաջողություններ և ձեռքբերումներ:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՆՎԵՐԸ՝ ԳԻՐՔ

Հայ մեծ բանաստեղծ՝ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրվան նվիրված գեղեցիկ ավանդույթը չի խախտում նաև Զանգեզուրի պոլնձամոլիբդենային կոմբինատը: Հայաստանում փետրվարի 19-ը նշվում է որպես գիրք նվիրելու օր:

Բազմաթիվ նոր գրքեր մի քանի օրվա ընթացքում համալրեցին Կապան և Քաջարան խոշորացված համայնքների 32 գյուղական բդպրոցների գրադարանները: Կոմբինատի և մարզպետարանի աշխատակիցներն անձամբ են փոխանցել նվերները դպրոցներին:

Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մերի Գանդալյան. **«2023 թվականի փետրվարի 1-ին Սյունիքի մարզպետարանի և ԶՊՄԿ միջև կնքվել է համագործակցության հուշագիր: Մի շարք խնդիրներից բացի հուշագիրը նպատակ ունի մարզում զարգացնել կրթության, մշակույթի և սպորտի ոլորտները: Եվ այս նախաձեռնությունը համագործակցության մեկնարկն է»:**

Թումանյանական շաբաթվա շրջանակում դպրոցների սաները փոքրիկ ներկայացումներ ցուցադրեցին նաև հյուրերին:

ԶՊՄԿ լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի տեղակալ Լիլիթ Իսրայելյան. **«Գրքերի բովանդակությունն ընտրեցինք այնպիսինն, որ հետաքրքիր լինի ժամանակակից երեխաներին, այսինքն արկածային գրքեր կամ, օրինակ, երգերի ժողովածու: Նախաձեռնությունը կլինի շարունակական, և մեք կօգտագործենք ցանկացած առիթ՝ դպրոցների կյանքը փոքր-ինչ աշխուժացնելու համար»:**

Էջի նյութերը՝ Անի Գրիգորյանի

Պղնձի գինը*



Մոլիբդենի գինը*



* Գինը համաձայն Լոնդոնի բորսայի, տ/$